

16314

54

ՊԵՐՃ ՊԻՕՇԵԱՆՑ

Ն Ա

(Պ ա տ կ է ղ)

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ

(Նախուսով է բացառապէս կենդրոնական  
զբախճառ անոցում:)

Թ Ի Ք Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէի, Նիկոյ, տ. 21.

1896

891-99  
Պ-89

~~3601~~ 3601  
~~280~~ 280  
280

3601-64

4210 / 548  
423  
891.99

ԳԵՐՃ ԳՌՕՇԵԱՆՑ

Մարտի 21  
1889

7-89

Ն Ա

Կ

74

(Պ ա տ կ ե ը)

Ամս 5 53



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Հարամեի, Նիկոյ, տ. 21.

1896

Дозволено Цензурою, Тифлисъ , 11 Мая 1896 года.



Ա.

Ն Ա.

Նա կանգնած էր Վանքի դարբասից շատ հե-  
ռու՝ երեկ երեկոյեան ժամի սկզբից, նա կանգնած  
էր և այսօր առաւօտեան ժամից՝ մինչև ճաշուան  
հանդիսաւոր պատարագի աւարտելը:

Մեծահանգէս էր նախընթաց երեկոյի ժամեր-  
գուլթիւնը, հրաշափառ էր հեռեեալ ցերեկը. երեկ՝  
մանկացեալ Փրկչի ճրագալոյցի երեկոյեան պատարագն  
էր, այսօր՝ Ջրօրհնէքի մեծախորհուրդ հանդէսն է:

Սյգպիսի նա ու սա հազարներով էին խառնը-  
ւում և վխտում Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու  
շուրջը: Սնթիւ ու անհամար բազմութիւնի մէջ թող  
նա ևս լինի:

Դալիս են ու գալիս են, շրեղազարդ կառքերի  
շարքը մինչև փողոցի մի ծայրն է հասնում. վանքի  
եկեղեցում, վանքի բակում ասեղ վայր ձգես, գետին  
չի ընկնիլ:

Եկեղեցու ներսում՝ կանանց դասը դարձել է  
աստեղագարդ երկինք. նորատի հարս ու աղջկանց  
վզատակերի և հոլանի բազուկների վրայից պէծպծին  
տուող անգամանդները մի մի սրածայր աստղեր են,

որոնց փայլը սիրատարի երիտասարդների աչքերից ներս է մտնում և սրտերի խորքում պայծառ ցոլանում, աւելի պայծառ, քան գեղեցկուհիների ձեռքով սուրբ պատկերների առաջ վառուած բազմաթիւ մոմերը:

Մշտապէս ժամ յաճախող աղօթատէր ծերունիներից շատերն այս երեկոյ խոհեմութիւն են արեւ տանը մնալու. իսկ որոնք անհեռատեսութեամբ եկել են, այնպիսիքն իրանց սովորական տեղերից բըշուել են ու պատերին կպած սլմուել, որովհետև նըրանց ամէնօրեայ տեղերն այսօր երկու տեսակ ժողովուրդ են բռնել:

Ի՞նչ հակադիր խմբուածք, ի՞նչ տարապայման կեդրոնացումն, կոկլիկ հագնուած, ձիւնանման օձիքներով զարդարուած, գեղեցկութեան սիրահար երիտասարդների կողքին կանգնուող են ճղճղոտուած, բայց լուացուած, մաքուր շուքքաներով, հաստ գեղնագոյն էթանագլին մահուտի, կարճ վերնազգեստներով և կապոյտ լեղակով ներկած կտաւի անդրափարտիկներով օտարականներ:

Վերջիններս Տաճկահայքից խմբերով Թիֆլիս լցուած դարիբ մշակներն են, որոնք աուն ու ընտանիք անտէր թողնելով հաւաքուել են մեր քաղաքը, թէ ի՞նչ է՝ արեան քրտինք թափեն, շալակով տներից ազր կրեն, փողոցներն աւլեն, ամեն տեսակ ստորին ծառայութիւններ կատարեն, մի քանի սև փող յետ պահեն իրանց պառն աշխատանքից և տա-

նին իրանց հարևան քրդի բէկերի, կամ տաճիկ վաշխառուների պարտքերի տոկոսը, գոնէ, գեղչեն:

Ամէնքի համար պարզ է, որ առաջին կարգի մեր նկարագրած ժամաւորներն այս հանդիսաւոր օրն երեսներին վարագոյր են բռնել և սիրունների հոտով արբեցած՝ են ժամ լցուել: Իսկ վերջինները՝ խեղճ հայ մշակները, թէպէտ առհասարակ կերածները ցամաք սև հաց է ու պանրի անիւղ չում, բայց նըրանք ութ օր շարունակ ծոմ են պահել, վերջին օրը բաղանիս են գնացել, իրանց ձեռքերով հնոտիքները բաղանիսից դուրս վազող սապնաջերուձ լուացել են, մաքրուել են ու եկել են մանուկ Յիսուսի փրկարար ծննդեան Ճրագալոյցի երեկոյին՝ սուրբ պատարագին հաղորդուելու:

Այդ էր հայ աշխարհի հարազատ զաւակ հայ քրիստոնէի աւանդական նուիրագործուած սովորութիւնը. մի օր կար, որ հայ-քրիստոնեայ չէր համարուում նա, ով որ Զատիկի և ծննդեան Ճրագալոյցին չը ճաշակուէր: Մաքուր հայութեան մէջ այսօր ևս նոյնն է:

Ժամի բակն այսօր նոյնպէս լիքն է ժողովրդով: Նրանց երեք կարգի կարելի է բաժանել: Եկեղեցու շուքը, ցուրտ երկնքի տակ, երեսներն արևելք դարձրած, բաց գլխով անշարժ կանգնողները համբարութեան որդիքն են, որոնք ժամուձը տեղ չը գըրանելով լուութեամբ լսում են ժամերգութիւնը և իրանց աղօթքն են մըմնչում: Քիչ հեռու՝ բակի մի-

չավայրերում տեղ տեղ բոլորուածները միջնակարգ վաճառականներն են, կամ իրանց գործակատարները; որոնք իրանց կանանցը ժամ են դրկել, ու իրանք նրանց դուրս գալուն են սպասում. իսկ հեռուումը՝ ծառուղիների մէջ շրջողները՝ իրանց գլուխն *ինտելեգենտ* համարող «գաղափարական» երիտասարդութիւնն է՝ իրանց ասելով՝ աւուր պատշաճի հրատապ մտքերի փոխանակութեամբ համակուած:

Քիչ մնաց մոռանում էինք Աստուածանից մուռացուած և մարդկանցից արհամարհուած կոյրերին, կաղերին, անդամալոյծներին, որոնք վանքի դարպասի երկու կողմից կարգով շարուել են ու ոմանք նստոտած, ոմանք կանգնոտած՝ ձեռք են պարզում և մուրում են.

— Ողորմութիւն արէք, աղաներ, պարոններ, տիկիներ, խաթուն-խանումներ, անաչքին, անտէրին, որբին, այրուն, սրտամորմոր աղերսանքներ են լսուում թշուառներից:

Բայց թշուառների մէջ կան և թշուառներին հարստահարողներ: Սրանք են մահմեդական քրդերը, կամ ստատանապաշտ եղիզները: Կիսամերկ, այրուած ու խանձուած երեսով ու կրծքերով, մի մի մոլորուած, անփորձ ու անճար ազբատի, կամ կոյրի իրանց ճանգն են ձգել սրանք, ողորմելիների շնորհիւ ժողոված ողորմութիւնը, իբր թէ՛ հաւասար բաժին անելու պայմանով, բայց իսկապէս խեղճերին զրկելու խորամանկ նպատակով: Քարշ են տալիս

խաբեբանները միամիտ զոհերին ետններից և ժամի բակում կանգնած բազմութեանը զգուացնում: Սրբանք դեռ տղամարդիկն են. աւելի անտանելի են նրանց կանայքը: Վերջիններս վարձով վերցնում են մի մի որբ ծծկեր մանուկ, ցնցոտիներում պատած՝ գրկերն են առնում և աներեսաբար՝ սրա, նրա թիւն ու փէշը ձիգ տալով՝ *չինգեսանայ* անքրիստոնեաները Քրիստոսի և Մարիամ Աստուածածնի անունով երես են վէր բերում, փող են ուզում ու մարդի սիրտը ակամայից բարացնում են: Կան այնպիսիները, որոնք այսօր աչքերը կապում, կոյր են ձեռնում, միւս օրը՝ ոտքը վեր բռնած՝ անդամալոյծ են դառնում, մի ուրիշ անգամ՝ համր կամ ընկնաւոր, մարդիս զգուանքի հետ և դառն ծիծաղ են բերում, մարդիս հաւատը միանգամայն խախտում դէպի մարդկութեան բաղդազուրկ գաւակները:

Սխալ ենք, ճակատագրի հարուածին զոհ գնացած տնանկներից ոչ ոք զրկուած չի մնում, էսպիսի օրը՝ նրանցից ամէն մէկը քշից շատից շահուում է: Բարեպաշտ և աստուածասէր Թիֆլիսի ժողովուրդըն իւր գանձանակն, իւր մոմի փողը, իւր աղբատին բաշխելիք կոպէկները նախօրոք գրպանն է դնում ու այնպէս է ժամ գալիս:

Կոյր ու կռնատ աշուղներն անգամ՝ դարբասից դուրս՝ ժամաւորների անցնելու ճանապարհի երկու կողմը շարուել են և իրանց *չունգուրներ* լարերը թրթուացնելով՝ երգում են «Ախ հայրիկ», կամ «Սա-

սուն» ու «Չէլթուն» և իրանց բաժինն ստանում: Պղնձի դրամներ են, որ ամէն կողմից թռչելով ընկնում են աշուղների առաջներին փռած հնմաշ ու անգոյն թաշկինակների մէջ:

Ուրեմն ոչ որ առանց բարեհամբոյր ուշադրութեան չմնաց:— Տէնց այդ է, որ մենք սխալ ենք. մինը կայ, որ անուշադիր մնացել է, որին ոչ որ չի նկատել, տեսնողն էլ չի հետաքրքրուել իմանալու, թէ սով է նա, աղքատների շարքից ջոկնուած, մուրացիկներից շատ հեռու, վանքի հարևան նազարի տան անկիւնում գլուխը կախել է և անխօս կանգնած է:

Իրաւունք ունի բազմամարդ քաղաքի համայնքը չը նկատել մի որևէ անյայտ անձնաւորութիւն, որի նմանն ամէն քայլափոխում հազարաւորներ աչքի են ընկնում:

Թիֆլիսը՝ Կովկասեան քաղաքների աչքն ու սիրտը, կարելի է ասել, որ շատ յետ չի մնալ աշխարհիս մեծամեծ քաղաքներից՝ իւր մէջ հիւրասիրած ամենատեսակ, խայտաճամուկ, հեռաւոր և մերձաւոր օտարականներով:

Թիֆլիսի աչքերը սովոր են տեսնել տիեզերքի շորս կողմերից եկած այցելուներ՝ վերջին նորաձուութիւնով հագնուած եւրոպացի ճանապարհորդներ, երբեմն երբեմն՝ արևադարձի սևամորթ բնիկներ, Հաբէշներ, Արաբներ, Ասիայի խորքերից եկած՝ մագի հաստ հիւսը քամակիցը կախ Չինաստանցիք, Ա-

մերիկացիք և այլն. իսկ շրջակայ հարևան երկիրներից՝ սրագլուխ պարսիկ, քոլոզագլուխ քուրդ, ֆասագլուխ օսմանցի, լեզգի, բուխարացի, թեքիացի, նողայ, դալմուխ, թաթար և այլն. սրանց համար խօսելն անգամ աւելորդաբանութիւն է, միշտ կան, միշտ գալիս են, միշտ գնում են: Կովկասի այցելուն նախ և առաջ Թիֆլիսի այցելուն է:

Այդ է՝ պատճառը, որ մեր շեշտուած անձը չի նկատուում իւր արտաքինովը:

Խօսք չունիմ՝ առաջին տարիները, երբ Թիֆլիսի համար հագուազիւտ հիւր էին Օսմանլուից եկած հայերը, նրանք կարողանում էին գրաւել շատերի ուշադրութիւնը, բայց վերջին ժամանակներս նրանք իւրաքանչիւր քայլում հանդիպում են:

Այն, մեր պատմուածքի առարկան եղող մարդի հագուստին ու դէմքին նայող անցւորականներից շատերը հաստատապէս քեզ կը պատասխանէին, թէ նա՝ անկիւնում կանգնած պանդուխտը տաճկահայ է. այսքանն և եթէ կ'ասէր ամէն որ և կանցնէր, ինչպէս որ անցնում էին. իսկ խորագնին հայեացք դարձնողը անկարելի է, որ մտքումը հետևեալ եզրակացութեանը չը վար:

— Այս մարդը նորեկ է և սրտումը մի ծանր վիշտ ունի:

Բայց, դիցուք, թէ ունի վիշտ, ում հոգն է, քիչ վշտալիք կան աշխարհքիս երեսին: Հատերից մինն ևս թող լինի նա: Ազատ տեղ, արձակ ու լաին

հրապարակ, թող այնքան կանգնի, ծնկներից սև ջուր կաթի:

Եւ կանգնած է մարդը և ոչ ոքի չի նեղացնում, և ոչ ոքի ճանապարհը չի կտրում, և ոչ ոքի մի խօսք չի ասում:

Ինչպէս ասացինք, նա կանգնած էր Ծննդեան Զրազալոյցի երեկոյին, նա կանգնած էր այս առաւօտ, նա կանգնած էր Ջրօրհնեաց մեծահանդէս պատարագին:

Այսբանն է, մեր տեսներով՝ տուած պատասխանը: Իսկ Վանքի մայր եկեղեցու շրջակայ գրացիք մեզ կ'ատէին և կը հաւատացնէին, որ նա կանգնած է միննոյն տեղում ամբողջ շաբաթ:

Բայց նա ի՛նչ մարդ է, որ մեզ մոլորեցրել է, ընչն՛ւ նրա գոռոզ հայեացքը չէ համապատասխանում հագած փալաս-փուլուսին: Տաճկահայ լինիլն անկասկած է, այդ ցոյց են տալիս հարիւրաւոր շալի, կրտաւի, հնացած կերպասի, կամ մաշուած կապերտի գոյնգոյն կարկատանները, որոնք բրդեայ հաստ գերձանով ամրացրած են օտարականի բաճկոնանման վերնազգեստի վերայ. նրա խայտաբղէտ կարկատաններով բեռնաւորուած, հնամաշ անդրավարտիկի վերին մասը ներկայացնում է Տաճկաստանի բուն բրնակիչներին, իսկ ներքեւ՝ փոխկերքը մեր առաջ տնկում է Ալաշկերտցուն. գլխին ծածկած, գունահատ ֆասը պօլսեցոնց է մեզ մտաբերում, իսկ արտաքուստ, ֆասի վրայ փաթաթած, պատառոտուն,

մետաքսեայ *տազմա* կոշուած թաշկինակը Մշեցուն է դիմացդ կանգնացնում: Ոտնամաններն ու գուլպաները նոյնպէս միմեանց չէին բռնում և նայողին հարցական նշան էին դարձնում. կրնկները ծակ գուլպաններից մինը սև ոչխարի բրդից էր, միւսը սպիտակ, բայց ակտոտ բամբակի թելից. մի ոտքին տրեխ էր, միւսին՝ Արզրումցու սօլ (շուստ):

Այլ ևս կասկած մ'նա՛ց, որ մարդը մուրացիկ աղքատի մէկն է:

—Այո և մեծ կասկած, անձանօթի նայուածքից դատ՝ ձեռքերն ևս մեզ մտատանջութեան մէջ են ձգում. ոչ բազմաշխատ մշակի և ոչ թափառաշրջիկ մուրացիկանի են սեպհականութիւն նրա թաւիչիցաւելի փափուկ ձեռների մորթը և դիւրաթեք մատները, որոնք, թէ և, դատարկ են, բայց աջ ցուցամատի վրայ պարզ նշմարուում է մատանու թողած հետքը:

Ձուր, ուրեմն, գլուխներս չը ցաւացնենք. օտարականի արտաքինը եթէ մեզ գոհացումն չը տուեց, նրա աչքերից իւր սրտի վիշաք որոշելուց յետոյ՝ դրականապէս կարող ենք պնդել, որ մուլթն անձնաւորութիւնը խելքի տէր գլուխ է, մի օր հարուստ է եղել, իսկ այսօր քաղցած է:

Բ. Գ Ո Ղ.

Երկու հոգի էին վերջին որոշակի վճիռը զնոյ-

ները, որոնք նայեցին մարդին և թողին ու անցան, բայց երկուքինն ևս մի և նոյն բուռն իրանց ենթադրութիւնները մտքներումն անելուց յետոյ՝ միաժամանակ կանգ առան:

Պետրոսն ու Պօղոսն էին անցնողները, որոնք մի վայրկենաչափ կանգնեցին, իրար մէջ փոփոսացին ու ձեռքները զրպանները տարան, մի մի արծաթէ տասը կողէկանոց հանեցին, մօտեցան մարդին և բուռը կոխեցին:

Բուռը կոխեցին և ոչ թէ բուռը դրին. մարդի մի ձեռքը կողքին էր դրած, միւսը կախուած:

Փորձառու դիմագէտը կարող էր հոգեբանօրէն բացատրել պանդխտի ներքին յուզմունքի աստիճանն և տեսակը:

Պետրոսն ու Պօղոսը ծխական դպրոցի ուսուցիչներ էին, ուրեմն, քիչ ու շատ հոգեբաններ: Նրանք այսքանը միայն հասկացան, որ տարօրինակ մարդը կատաղութեան չափ վրդովուեց, անողոր գազանի հայեացք առաւ աչքերի մէջ, փողը բռնած ձեռքով բռնեցք արեց և կամենում էր մի մի հարուածի հետ՝ տուածներն երեսներին զարկել. բայց այս յուզմունքը միայն վայրկենական էր:

Ական թօթափել՝ անծանօթի ձգուած ջղերը թուլացան, գոռոզաբար բարձրացրած գլուխը դէպի կուրծքը կախուեց, արծաթը սեխմոզ ձեռքն ինքնաբերաբար յետ բացուեց ու մարած աչքերի թոյլ ու-

նուազ տեսողութիւնն ընկաւ ձեռքումն եղած ստակի վերայ:

Այդ բուռն նա ոչինչ չէր տեսնում բացի արծաթի դրամից. նրա մտածութիւնը կեդրոնացած էր միմիայն փողի վրայ:

Այս պատկերը նմանապէս երկար չը քաշեց. մի վայրկեան միայն տևեց:

Անծանօթը դարձեալ ցնցուեց, գլուխը շտապով վեր բարձրացրեց, աջ դարձրեց, ձախ թեքեց ու, կարծես, մի բան միտքն եկաւ. նա փողը բռան մէջ պինդ սեխմեց, ու չը հարցրած վաթսուն, կամ աւելի տարեկան հասակին՝ քամու արագութեամբ ուսուցիչների առաջովը վազեց՝ առանց ուշադիր լինելու, թէ կարող էր անգողչութեամբ և ապերախտաբար իրեն ողորմողների ոտքերը տրորել. և կանէր անշուշտ, եթէ նորա բնագոյամբ մի քայլ յետ չը քաշուէին:

— Ի՞նչ կը նշանակէ այս, միաժամանակ դարմացած բացականչեցին մանկավարժները, ցնորուեց:

— Ա՛... ա՛... ա՛... ծոր տուեց Պետրոսը, հասկացայ, այնտեղ նայիր:

Նա ընկերի թեր բռնեց ու ցուցամատով փողոցի ծայրում գտնուած փուռը ցոյց տալով՝ նրան քարշ ածեց, համարեան, դէպի հացավաճառի կողմը:

— Անխոզմտանք, քանի՛ տնտնաս (ուշացնել), ահա ստակն աչքդ խօթեցի, հիմա՛ ի՞նչ ասելիք ունիս, տուր՝ որքան կը հասնի, լուսեցաւ հեռուից տաճ-

կահայոց բարբառով փռի առաջին կանգնած մարդու ձայնը:

Գորան պատասխան՝ փռան կողմից նրա առաջը թափուեց մի քանի հաց և փռնչու անարգական հետևեալ խօսքերը.

—Առ կորսուէ ու ալ աստեղս մի երևար, ոչ ալ ուրիշ ֆրոնները գնա. քեզի նման հազարները, Աստծու մի օրը գլուխ կը ցաւցնեն, բոլորին եթէ տալու ըլլանք, ինքներս անօթի պիտի մեռնինք, կամ քեզի պէս մենք ալ պիտի ձեռք պարզենք. հարի՛ֆ թշուառական, կըսէ՛ քաղաքիս ըմէն ֆռոնները զընացեր է, վէրասիա (ապառիկ) հաց է պարտք ուզեր՝ չիյտեմ (չգիտեմ) ո՞ւմ համար, ու չեն տուեր, մե՛ծ բան:

Փռնչու վերջին խօսքերը մարդի ականջին չը հասան, նա հացերը շտապով դրեց վերարկուի փէշը ու որքան ոտքերը կը դօրէին, Մուխրանեան փոզոցով սկսեց ներքև վազել:

—Տեսար, հասկացար, լսեցի՞ր, հարց տուեց Պետրոսը Պօղոսին:

—Լսեցի և հասկացայ, բայց թշուառ մարդը սխալ քայլ արեց, նա փափազին չի համար:

—Ի՞նչպէս:

—Էնպէս էլ կարծում էի, նա տեղ չի կարող հասնել, եթէ մենք չօգնենք. դէհ, էլ մի կանգնիր, ետեիցս արի, և Պօղոսն առանց ընկերին սպասելու՝ իւր արագ քայլերն ուղղեց դէպի նոյն փողոցը, որ-

տեղից լսուում էր ստորին ոստիկան զինուորի սուլոցը:

Թիֆլիսի դատարկաշրջիկներին այդչափը բաւ էր: Տօն օր էր, հանդէսն այն ճանապարհով պիտի յառաջ ընթանար դէպի Կուր գետը՝ Ջրօրհնէր կատարելու:

Այդ փողոցի երթևեկութիւնը, թէպէտ միշտ անպակաս է, բայց այսօր բազմութիւնը խճողուած կանգնած է, պատշգամբներն ու կտուրները հօ գարնանազարդ դաշտի նման կանաչ ու կարմրի էին տալիս և վեր նայողի աչքերն էին ծակծկոտում:

Դաշտի ծաղիկներն աչքեր չեն խտտղեցնիլ, եթէ տափի վրայ, հողի մէջ, խառը չըլինէին փայլուն գայլախազի, կամ մետաղի աւազ, որոնց մէջ արեգակի ճառագայթները թափանցում է և յետ կոտրւում ու նայելն արգելում:

Ոչ մետաղ և ոչ ապակու փշրուներ էին իրանց վրայ դարձրած բիւրաւոր աչքերը շլացնողները. իսկական գոհարներ ու շողակներ էին, որոնք զարդարում էին պատշգամբների ու տանիքների վրայ միմեանց գլխի կիտուած կենդանի ծաղիկների՝ Թիֆլիսի հանդիսասէր գեղանի ուհիների կրծքերը, բողոկներն ու մասնիկները:

Ոստիկանի սուլոցին պատասխանեց յիսուն քայլաչափի վրայ կանգնած ուրիշ ոստիկանի շուփն, ներքևից էլ՝ մի երրորդը, իսկ նրանց ձայնակից եղան փողոցային մանուկների ու պարապորդ քարշ

եկող երիտասարդների անկարգ աղաղակները՝ բռնեցէք... գող է... չէք տեսնում, գող է... փէշումն ինչ որ բան լցրած՝ փախչում է:

— Աղջիկներ, էն տեղ նայեցէք, գողը փախչում է, միմեանց հրեցին բարձրից գեղեցիկ սեռը:

Հիմա էլ միայն Պետրոսն ու Պօղոսը չեն վազում, փողոցումը մէկը կայ՝ ներքն է վազում, հարիւրը կայ՝ նոյնն է անում:

— Բռնեցէք... տուէք... խփեցէք...

Ասած է՝ գժին մի հուշան էլ բաւական է:

Արդարև, Մուխրանեան փողոցի ծռանցքումը, ուր ճանապարհն երկու է ճիւղաւորուում. մինը գրնում է գէպի գետը, իսկ միւսը գէպի Ալիւրի հրապարակը, ուղիղ ոլորանի բերանում՝ խմբուել է ամբօխը, ճիչ ու աղաղակ է բարձրացնում, իսկ մէջ տեղից մի աղէկտուր, ցաւալի, նուազ ձայն լսողի սրտի թելերն է մղկտացնում:

— Ողորմեցէք, բրիստոնեայք, զարկեցէք որքան կամենաք, միայն թէ հացե՛րս, հացե՛րս մի առնէք ձեռքիցս, ինձ ազատ թողէք, շտապեմ գաւանկս՝ աւօթուլթիւնից մեռնող թոռնիկս մահուան ճիրաններից յետ խլեմ:

Պետրոսն ու Պօղոսը հեռուից ձայնը ճանաչեցին. փռնչու վրայ բարկացող ձայնն էր այն, բայց ինչ կարող էին անել, խաժամութիւն այնքան էր հաւարուել, որ միայն հեծեալ ոստիկանների ու զազախների մտրակը պէտք էր ցրուելու համար:

Եւ դրանք միայն կարող եղան օգնութիւն հասնել: Խաչի հանդէսն արդէն մտել էր Մուխրանեան փողոցը, ժողովուրդը խոնուած՝ շուրջ էր բոլորել հոգևորականութեանը, ճանապարհ չէին տալիս թափօրին յառաջ գալու, իսկ այժմ կարգապահ ոստիկանների պարտքն էր ճանապարհ բանալու:

Լաւ էր, որ Պետրոսի միտքն եկաւ, դիմեց հեռուում կանգնող ոստիկան աստիճանաւորին և երկու խօսքով եղելութիւնը հասկացրեց:

Վերջինս խփոյն հրամայեց երկու հեծեալների և նրանք իրանց մտրակներով ամբօխի կոյտը յետ ցրուեցին:

Սրտակտուր տեսարան. ընկած է թշուառ օտարականը գետին, երեսն արնոտ, առանց գլխարկի, ցեխաթաթախ:

Հեռուում շաղ են անցած հացերը՝ ցեխոտուած ու ձկնոտուած:

Պանդուխտն ուշք չը դարձրեց իրեն բարձրացնել ուզող ոստիկանին, նա սողալով յառաջ գնաց փոքի վրայ ու մօտին ընկած հացը յափշտակեց և ազահաբար կրծքին սեզմեց. հնարք էր մտածում թագցնել հացը:

Այդպէս կարող է անել մինուճար զաւակի թըշուառ մայրը, որի աչքի սև ու սպիտակ սալազայ Լոյսին վայրենի աւազակները կամենում են խլել, կամ սպանել:

Ոչ հացերը մնացին գետնին և ոչ օտարականը.

3745-48



ոստիկանները գանակոծուած ծերունուն վեր բարձրացրին, իսկ ամբոխի որդիքը հացերը ժողովեցին:

Դարձեալ ամբոխի որդին, փողոցային այդ թափառաշրջիկներն իրանց պախարակելի սովորութեանց հետ անբաժան ունին և կարեկից սիրտ:

Նրանցից մինը գլխարկով պանդխտի երեսի արիւնն է սրբում, միւսը վրայի ցելս ու ձիւնն է մարբում, երրորդը փէշն է բարձրացրել, հացերը խնամքով մէջն է դարսում և այլն:

Կարծես, ամէնքը մարդի անմեղութիւնը հասկացան և իրանց արածի վրայ զղջացան:

Նրանցից մինը մինչև անգամ մօտեցաւ օտարականին, թեանցով արեց և կամենում էր օգնել:

Ոստիկանը յետ հրեց կինտօյին և ինքը պանդրխտի թեք բռնեց ու քարշ տուեց ոստիկանատուն տանելու, պնդելով որ հացագող է:

— Ի սէր Աստուծոյ, ինձ ո՛ր էք տանում, գոչեց պանդուխտը, հերիք է, ինչքան ծեծեցիք, թող տուէք այժմ, որ հացերս առնեմ, փութամ, թոռանս կերցնեմ. երեք օր է քաղցրիկ մանկիկիս բերանը մանանայ չէ մտեր, կը մեռնի:

Խուժանի գութը շարժեց, բայց ոստիկանն անողոր մնաց, նա չը լսեց ոչ շրջակայքի թախանձանքին, ոչ պատշգամբներից բարձրացած ցաւակցական կանացի ձայներին, և յառաջ վարած՝ մղում էր մարդին:

— Ոստիկան, մօտեցան Պետրոսն ու Պօղոսը,

այս մարդը գող չէ, մեր ներկայութեամբ սա հացը գնեց փողոցի ծայրին եղած փռնից, թող տուր սրան:

Ո՛ւմ ես ասում, լսել անգամ չի կամենում, գոց է՝ և վերջացաւ:

— Ոտքերիդ մեռնեմ, կուացաւ և ուզում էր ոստիկանի ոտքերը համբուրել յուսակտուր մարդը, ես ոչ գող եմ և ոչ ստակ ունէի հաց գնելու, եթէ երկու անձանօթ պարոններ ինձ չողորմէին. ահա, ահա սրանք են, ճանաչեց և ցոյց տուեց նա Պետրոսին ու Պօղոսին, որոնք այդ միջոցումը համոզում էին ոստիկանին՝ օտարականին արձակելու:

— Ես ոչինչ չեմ հասկանում և ոչ որի լսել չեմ կամենում, վճռաբար շեշտեց ոստիկան գինուորը, ես սրան կը տանիմ ոստիկանատուն, այնուհետև եկէք, արձակել տուէք:

— Ջանմ, ոստիկան էֆէնդի, հապա դու սիրտ չունիս, դու եթէ գաւակի տէր չես, մի մերձաւոր էլ չունիս, որը կարող էր անօթութիւնից մեռնել:

Էֆէնդի բառը միայն հասկացաւ ոստիկանը և ուրիշ ոչինչ, իսկ այդ շարագուշակ բառը հերիք էր անբաղդ պանդխտականի վիճակը որոշելու:

— Էֆէնդի... էֆէնդի... կրկնեց ոստիկանը, ուրեմն դու էֆէնդի ես, դու տաճկաստանցի ես, հարց տուեց նա:

Այո, տաճկաստանցի եմ, էրզրումցի եմ, թարգմանի բերանով պատասխանեց օտարականը, բայց գսղ չեմ:

— Ուրեմն ցոյց տուր անցաթուղթդ:

Մարդը դեղնեց, շփոթուեց և նուազ ձայնով կուշ ու ձիգ գալով ասաց:

— Անցաթուղթ չունեմ:

— Անցաթուղթ չունեմ, ուրեմն յառնջ, դէպի բանտ:

— Բանտ, յուսահատութեամբ գոչեց ողորմելին, հապա իմ գաւակս, իմ հինգ տարեկան գառնո՞ւկս:

Յանկարծ մարդը թափահարուեց, մի մխիթարական միտք ծագեց նրա ուղեղի մէջ. — վնաս չունի, ասաց նա, խիստ լաւ, խիստ աղէկ, ուրախութեամբ կերթամ բանտ, բայց նախ՝ ինձ տարէք թոռանս մօտ, մի կտոր հաց ուտեցնեմ, քաղցի ճանգից ազատեմ, յետոյ՝ երկուսիս միասին բանտ տարէք:

Ձը գիտեմ, արդեօք, լաւ արին Պետրոսն ու Պօղոսը, որոնք տեսնելով թէ զինուոր ոստիկանին անհնար է կարեկցութեան հրաւիրել, կամ խօսք հասկացնել, աչք ածեցին, հանդիսականների մէջ գտան ծանօթ ոստիկանական մի պաշտօնեայ ու նրբան գիմեցին, իրանց վրայ առան երաշխաւորութիւնը և նրա հրամանով արձակեցին խղճալու, թէն ընկան և ուզեցան հեռանալ ամբօխից:

Կրկնում եմ՝ դարձեալ ամբօխի որդին, որին ամեն տեղ մի մի անարգական կոչումով են մեծարում. — ռամիկ, կինտօ, չափխո՞ւն, լօթի և այլ այլապիսի ստոր անուն է գրոշմել գոռօզ ու բաղդի կու-

շութեամբ յղիացած մարդկութիւնն իր պարզասիրտ ու կրտսեր զաւակի ճակատին. դարձեալ այդ ստորին դասի սիրտը զգաց ընկած անբաղդի աննախանձելի վիճակի դառնութիւնը, այն, կինտօներն անմիջապէս հասկացան իրանց սխալը:

— Տօ, Միխօ, Կակուլի, Ծղալօբ, ի՞նչ անաստուած բան ենք արել, մարդը գող չէ եղել, իր թոռան համար հաց է տանելուս եղել, հացն իր փողով չէ առել, խեղճը փող էլ չէ ունեցել, սրանք՝ էս վարժապետներն են բաշխել:

Այս մի քանի խօսքը բաւական էր: Ասողի հետ՝ նրանցից շատերը քսակների բերանը բաց արին ու ըստ կարողութեան՝ ստակներ հանեցին և առաջարկում են պանդխտին:

— Չնտ շատ տանք, տօ, հէնց իմանանք՝ էս օր հնգուհաւ չենք կերել, ասում են իրարու կինտօները և սև փողը, սպիտակ փողը, մի երկուսն, անգամ, թղթադրամը դէմ են անում մարդուն:

Օտարականը մտածութեան մէջ ընկաւ, մի բոպէ նա գլուխը կախեց, աչքերը խոնարհեցրեց, կարծես՝ ինչ որ բանի վրայ խոր մտածում էր: Երկրորդ ըսպէին՝ նա վեր նայեց, աչքերն աջ ու ձախ դարձրեց ու դիտում էր բոլոր բազմութիւնը և մօտեցող թափօրը: Յետոյ նա մի խորհրդաւոր ժպիտ խաղացրեց երեսին, երկնքին նայեց, խոր յոգւոց հանեց, ցուցամատով իւր քներակին երեք թեթև գարկ տրւեց ու ասաց:

— Ի՞նչ արած, սիրելի համազգայինքս, ոչ դուք էք մեղաւոր և ոչ ես, դառնազէտ հանգամանքների շնորհիւ՝ այսօր դուք, իբրև մի մուրացիկի, տարածում էք ձեր առատ ձեռքը, և ես ստիպուած էի սրտագին շնորհակալութեամբ ընդունել, եթէ յարգելի ոստիկանը բանտարկելու շնորհը չանէր ինձ։ Աստուծոյ խնամոտ մատն էր, որ ոստիկանի ձեռքով չը թողեց զաւակիս՝ միակ որբացած թոռանս սովամահ լինել։ Շնորհակալ եմ, եղբարք, ինձ ստակ չէ հարկաւոր, սովոր ու վարժ ձեռքին հաճելի է տարածուել ողորմութիւն ընդունելու. բանտը միակ ապաստանարանն է, որ ինձ ամօթալից արհեստից կազատէ. մնացէք բարեալ, ես այս պատուելիներէ ուղեկցութեամբ կերթամ, թոռանս մի կտոր հաց կը կերցնեմ, ու անձամբ ոստիկանատուն կը դիմեմ և կը խնդրեմ՝ ինչպէս անցաթուղթ չունեցող փախըստականի, զաւակիս հետ միասին բանտ նստացնել։

— Ո՛չ, ո՛չ, չէ, չէ, մենք չենք թողիլ, որ բանտ նստիս, մենք քեզ համար շատ փող կը բերենք, հաց կը տանք, դեռ էսքանն ստացի, մենք շատ կը հաւաքենք, մի մի թունդի պակաս կը խմենք, միայն քո կացարանդ մեզ յայտնի, լսուում էին ամեն կողմից կլինտօների բացականչութիւնները։

Փողոված փողերը մի երիտասարդի գլխարկում էին տեղաւորած։

Օտարականը ոչ աչք ձգեց վրան և ոչ մատով կամեցաւ մօտենալ. նա խնդրում, ազաչում էր իրեն

երաշխաւորող ուսուցիչներին՝ չը դանդաղիլ, շտապով իրեն տուն հասցնել։

— Տուէր ինձ, սիրելիք, այդ փողերը և մի անհանգիստ անէք խեղճին, ասաց Պետրոսն, ու թաշկինակի մէջ լցրեց դրամը և ընկաւ պանդխտի թիւը, Պօղոսի հետ միասին յառաջ գնացին։

Բարեբաղդաբար, մի ընտանիք կառքով եկաւ և հեռուումն իջաւ։

Պարոնները նստեցրին իրանց հովանաւորածին կառք և սլացան գէպի ներքև։

Գ.

ՔԻՉ ԱՍՈՒՅՑ, ՉԱՏ ՋԱՍԿԱՅՈՒՅՑ, ԿԱՄ ՈՐ ՈՒՆԻՅԻ ԱԿԱՆՋՍ ԱՍԵՂՈՅ, ԼՈՒԻՅԷ։

Ճանապարհին ուսուցիչները կարևոր համարեցին իմանալ կարճօրէն անձանօթի անունն և պատմութիւնը։

Մարգն երկար ժամանակ լուռ էր, բայց վերջի վերջոյ՝ այսքան պատասխանեց նրանց քանիցս կրկնած հարցերին.

— Ազաչում եմ, թող ձեզ հարկաւոր չը լինի իսկական անունս և կեանքիս մանրամասնութիւնները. ընդունեցէք ինձ մի ոմն Թորոս Թաթոսեան. հայի անուն է, ի՛նչ վնաս ունի. թող այդ Թորոսը մի քանի հակիրճ խօսքերով ձեր հարցասիրական եռանդը զօհացնէ։ Բաւական համարեցէք գիտել, որ Թաթոսեան

տունը Կարին քաղաքի հին, նշանաւոր և հարուստ օջաղներից մինն էր. նա տեղական հում նիւթերի արտադրութեամբ էր առևտուր անում:

Պարտաճանաչ մարդիկ էին Թորոսեանք, ոչ միայն իրանց գործակատարներին չէին զրկում ու նեղում, ոչ միայն իրանց չքաւոր ազգականներին և տես ու ծանօթներին էին խնամում, այլ և բազմաթիւ անճարների և աշխատանքի անընդունակ գերդաստանների էին թոշակ կապած պահում. դռնէ դուռը շրջող մուրացիկներին անխնայ աչքերը փակած տալիս էին, եկեղեցի և դպրոց նրանց պիտակցութիւնից մեծ շահ ունէին:

Առևտուրը կառավարում էին չորս խելացի եղբայրներ, որոնցից երեք կրտսերներն եւրոպական կօլլէժներից աւարտած հասուն ուղեզի տէր էին, երէց եղբայրը, թէպէտ, տեղական հին դպրոցի աշակերտ, բայց դարձեալ տաշուած, քաղաքակրթուած և ծանրաշուրջ խոհական:

Եղբայրները թէպէտ չափահաս, ամուսնացած, բազմաթիւ երեխաների հայրեր, բայց բոլորեքեան իրանց գերդաստանով միասին հնազանդ էին իրանց վաթսունամեայ հօրն և մօրը: Այդ գժբազդ հայրն էր, որի անունը մենք Թորոս գրինք, նա ինքն էր Թաթոսեան տան անդրանիկ ներկայացուցիչը:

Տան սիւններից առաջինի ձեռքին էր արտաքին գործերի դեկը, իսկ երկրորդի ձեռքով շարժուում էր տանտիկնութեան շերտիւր: Աննիկ Խանում-արլայի

խօսքը ոչ միայն իւր յարգևոր հարսների, այլ և Կարին քաղաքի ուրիշ տիկնանց համար օրէնք էր:

Թաթոսեան տունն օտարազգիների համար ևս պատուելի էր: Ինչպէս ասացի, Թաթոսեանք տեղական հում արգիւնաբերութեանց առևտուր ունէին, երկրի բերքը Պօլլիս էին վաճառ հանում:

Յերթով տարէնը մի եղբայրն էր կատարում երկար ճանապարհորդութիւնը:

Այս տարի հայրն ինքն անձամբ տարաւ, (երանի՛ր ոտքը կտորէր, չը գնար). մի քանի օրուան մէջ Պօլլում վաճառեց մի եւրոպական ընկերութեան, ստացաւ կանխիկ գրամը և պատրաստուում էր ճանապարհ ընկնելու:

Մի այնպիսի խոշոր գումար ծոցում երկար ճանապարհորդութիւն յանձն առնողը յիմար պիտի լինէր, որ չէր Թաթոսեան տան պուխը:

Նա իւր սենեակում թողնելով քաւականաչափ ճանապարհածախը, մնացածը գրպանում գնաց փոխադրելու տեղական յայտնի բանկերից մէկի ձեռքով:

Աւաղ, ճակատագիրն այլապէս էր տնօրինել. կիսաճանապարհին Թաթոսեանը զրկուեցաւ իր կարողութիւնից: Անակընկալ աղէտը միայն Թորոսի պըլլիսին չը տրաքուեց. այդ անմոռանալի մահաշունչ օրը շատ արեան նախճիրներ գործուեցան. հազարաւոր զոհեր եղան, շատերն առանց հացի մնացին: Թորոսի ճակատի գիրն ուրիշ տեսակ էր գրուած. խուժանը գեռ կամեցաւ կողոպտել նրան և ապա

սպանել: Առաջին մտադրութեանը հասաւ խառնիճա-  
ղանճը, հանելով Թաթոսեանի ծոցից լիբը բսակը,  
իսկ երկրորդից փրկեց մարդին հրոսակներէի առաջ-  
նորդներէից մէկը: Մինչ ամբոխի միջից մէկը բարձրաց-  
րեց սուրբը և կամենում էր իջեցնել Թորոսի գլխին,  
յաղթանդամ այդ առաջնորդը, որ մի օր վայելել էր  
Թորոսի առատաձեռնութեան շնորհքը, ետեից բռն-  
նեց մահաբեր սուրբը և Թորոսին հաւի ձագի պէս  
գիրկն առաւ, յետ ճղելով բազմութիւնը՝ տարաւ նը-  
րան թագցրեց իւր տանը, որ մօտ էր աղէտի տեղին:  
Հետեալ օրը Թաթոսեանը թողեց անհիւրա-  
սէյր Պօլիսը, բայց նրան աւելի մեծ անբաղդութիւն  
էր սպասում իւր հայրենիքում:

Նա մտաւ իւրեանց մեծ բակը. ոչ որ չէր ե-  
րևում, բայց դռները բաց էին, շտապեց իրան ձը-  
գել սրահովը ներս, և ահա ինչ տեսաւ: Քսան և  
հինգ մեծ ու փոքր, նոր մորթոտած դիակներ թափ-  
ուած էին իրանց մեծ հացատանը. արիւնը լճացել  
կանգնել էր. երևում էր, որ կէս ժամ չէր լինիլ ան-  
ցած անմեղ գոհերի արդար հոգիքը արդարադատ  
Աստծու դատաստանին բողոքելու ըստէից: Երբ Թո-  
րոսը սկսեց այս ու այն կողմերը ցրուել դիակները,  
արիւնը դեռ չէր լերդացել, դեռ գոլորշին բարձրա-  
նում էր վրաներիցը:

Մէկ մէկ գննում էր Թորոսը սրախողխող սիրե-  
լիներին, աչքերն էր յետ քաշում, որ տեսնի, թէ  
լոյսի նշոյլ մնացել է մէջերը, ականջը սրտերին

դրած՝ լսում էր՝ արդեօք չի գարկում ու բաբախում  
մէկի սրտերակը: Անող թշուառ անբաղդին, իզուր  
էր, կարծես, նրա աշխատութիւնը, կարծես, ահա-  
գին ընտանիքից միայն իւր չոր գլուխն էր մնացել՝  
ողբալու և հողին յանձնելու մի ամբողջ գերդաստան:

Ծանր պաշտօն ու սուրբ պարտականութիւն,  
բայց կատարելը մարդկային թոյլ ուժից վեր:

— 2է, ես չեմ կարող այս խաչը կրել, գոչեց  
ծերունին յուսակտուր, միակ ելքն այս է, որ ինքս  
էլ հանգչիմ իմ սիրելիների գրկումը, և թող ուրիշ-  
ները մեզ ամփոփեն:

Թորոսն աչքերը յածում էր տան անկիւնները,  
գուցէ, գտնուէր մահաբեր մի սառը գործիք, որով  
կարողանար վերջ դնել իւր կեանքին: Եւ նա գտաւ:  
Դրան մօտ ընկած էր իւր անդրանիկ որդին, նրա  
ձեռքում մնացել էր բաց սուրբ: Թորոսը հասկացաւ,  
որ նա է եղել դուռը պաշտպանողը և նա է առա-  
ջինն արժանացել մարտիրոսութեան պսակին, նրա  
գիակի վրայով են մոլեռանդ գազաններն անցել ու  
սուրբ քաշել նախ՝ չափահաս արական սեռը և ապա  
կանանցն ու մանուկներին: Վերջիններիս գիակները  
թափուած էին տան խորքումը, այն ինչ տղամար-  
դիկը, երեի, կուռելով բռնաւորների դէմ՝ ընկել են  
դրանն աւելի մօտ:

Թորոսը վազեց դէպի սուրբը, կամեցաւ հանել  
դաստակը երէց որդու ձեռքից և իւր սիրտը կոխել,  
բայց, ո՞վ հրաշք, անդրանիկ մարտիրոսը բաց չի

Թողնում սուրբ, դաստակը մատների մէջ պինդ ամրացած է:

— Ընչո՞ւ, ընչո՞ւ, Գրիգորս, չես թողում հօրդ ձեր գրկին մեռնել, գուռաց ծերը, այսուհետև ի՞նչ կեանք հօրդ համար:

— Կատաղիք դժոխոց, այս ի՞նչ թոյլ նուոց, ի՞նչ նուազ ձայն և սրտեղից: Յանկարժ՝ ծերը բաց թողեց սուրբ և յետ յետ փախաւ. դիակների տակից նա իւր հարցի պատասխանն ստացաւ:

— Մխիթար....

Այո, մի ախ էր ալեորի պատասխանը, դիակները խառնելու՝ նա չէր նկատել տան ամենակըրտսեքներից մէկին, որ թաղուած է եղել նահատակների կոյտերի մէջ, որին եթէ ինքը՝ պապն անգլիտակցաբար ազատած չը լինէր վրայի ծանր բեռնից, դարձեալ հինգ բոպէ, և մանուկը խեղդուած կը լինէր արեան ճապաղիքում:

Էլ չը հասկացաւ Թորոսը՝ ո՞վ էր իւր ազատածը, աղջիկ էր, տղայ էր, նա ժամանակ չունեցաւ երեսին նայելու, մահը, անձնասպանութիւնը թուան նրա մտքիցը:

Հէնց այդ վայրկենին՝ դրան բացուածքից Թորոսի աչքովն ընկաւ մարդակեր գազաններից մէկը, որ յառաջ արած վարում էր քաղաքի հարուստներից մէկին, որին երբ չը կարողացաւ հասնել դահիճը, գնդակի մի հարուածով թիկունքից ծակեց ողորմելու կուրծքը, գետին տապալեց և շտապով մօտենալով դիտապատ, գետնին թաւալազոր եկող,

կեանքի հետ կռուող մեռնողին, կտրեց նրա գլուխը, մի կողմը շարտեց և գրպանն ու ծոցերը խառնեց:

— Հէ, անզգամ, գոչեց մարդասպանը, ստակներդ ուզեցար ինձնից թագցնել, կեանքդ էլ հետը վրադիր տուիր:

Թաթոսեանը տեսաւ հաստ քսակը սպանողի ձեռքին: Մի բոպէ, և գազանը ուրախ ուրախ հեռացաւ զոհարանից:

Ծերը մոռացաւ իւր մեռածներին, նա յափշտակեց թանգազին գիւտը, գրկին փակցրեց նուացող մանկանը, և թռչունի թխերով՝ շունչը Կարին քաղաքից դուրսն առաւ: Նա ազատեց մանկանը: Այո, մի մանուկ էր Թորոսի ազատածը, հինգ տարեկան մի մանուկ, որին նա դաշտումը վաղով ջրում լուսնալուց յետոյ՝ կարողացաւ ճանաչել:

Գա իւր երէց որդու կրտսեր գաւակն էր:

Երկար մտածել պէտք չէր, Թորոսը վճռեց թողնել իւր ծննդավայրը:

Միայն նա չէր, հարիւրաւորներն այդ օրը Թաթոսեանից յառաջ այդ քայլն արել էին, գաշտը լի էր փախչողներով:

Առաջին գիշերը Թորոսը թուանը գրկած՝ կուշեկաւ մի ձորում, բաց երկնքի տակ:

Հետեւալ օրը՝ մօտն ունեցած փողով մերձակայ գիւղից մի ձի գնեց, մի տոպրակով ցամաք չոր հացի պաշար վերցրեց և ճանապարհ ընկաւ:

Թորոսը մտքումը դրեց օր յառաջ Թիֆլիս համնել:

Հասաւ, բայց առանց մի ստակի: Վերջին ունեցած աննշան գումարը հագուստի և ձիու հետ սահմանազլխին քուրդ աւաղակները տարան՝ մի մի՝ շապիկ վրաները թողնելով և բաճկոնի ծոցից հանած քանի մի հատ այցետոմսեր երեսին շարտելով:

— Դուք այսուհետև ընչո՞ւս էք պէտք, փառասիրութեան առարկաներ, ասաց Թորոսը՝ ժողովելով այցետոմսերն և պատառոտելով:

— Այս մի հատը չեմ տալ, պապի, որ պատառես, խլեց երեխան Թորոսից մի այցետոմս:

Թաթոսեանը ոչինչ չասաց, նա թոյլ տուեց մանկանը կրծքին սխմած պահել այցետոմսը:

Մուլթն էր, որ Թորոսը շալակած իւր թեթեկենդանի բեռը, ոտքով (հետիոտս) սահմանն անցաւ և բաղխեց սահմանազլխում գտնուած մի գիւղի առաջին հանդիպած դուռը:

Քարեբաղդարար՝ քահանայի տունն էր այն:

Առաքելի և բարեպաշտ ծերունի հոգևորականն ամսաչափ պատսպարեց փախտականներին՝ նրանց մերկութիւնը ծածկելով գիւղի շէն տներից հաւաքած ցնցոտիներով:

Չքաւոր քահանայի տուած չնչին արծաթն երկուշաբթից յետոյ՝ առանց ձեռք պարզելու Թիֆլիս հասցրեց Թաթոսեանց վերջին մնացորդներին:

Թիֆլիսի փողոցներում, դէպքի բերմամբ՝ Թորոսին ճանաչեց և մօտեցաւ նրա հինաւուրց ծերունի ծառայ Ղազարը՝ մի ջղոտ և ամրակազմ ալևոր:

Ղազարը բաժանուեց մի խումբ օտարականներից և մօտեցաւ իւր նախկին տիրոջը:

Ղազարը միայն չէր, նա իւր հայրենակիցներից մի քանիսի հետ շալակել էին ունեցածները և շուռւմ էին իրանց ծննդավայրը:

Ծերունի Ղազարն երկու խօսքով լսեց Թորոսից եղելութիւնը և առաջարկեց նրան իւր թողած բնակարանը:

Ճանապարհորդների հետ կային բաւականին թուով բազմութիւն՝ տղամարդիկ, կանայք, երեխայք, որոնք ինչպէս վերջն իմացուեց, եկել էին ճանապարհ դնելու իւրեանց հեռացող սիրելիներին:

— Տղէներ, ասաց Ղազարն իւր ուղեկիցներին, դուք այստեղ կացէք, ձեր վերջին բարին իրարու տուէք, մինչև ես գամ:

Մինչ Ղազարն իւր ընկերներին ծածուկ հասկացնում էր Թաթոսեանի սով լինելը, վերջինս տեսաւ, թէ ինչպէս ընկան կանայքը գնացողների վրդերով և համբոյրներ էին շուայում:

— Բարո՞ւ ըզլի, Գրքէ, լալով համբուրում էր մի երիտասարդի աչքերը մի պառաւ կին, իմ Սանամին, իմ Մրտօյին, իմ անուշ Նագէին երկու աշուշ (աչքերի) մէջ պազիկներ կուտաս, ասա՛՝ ձեր բէիղբալ (անբաղդ) մէք գարուն կիզայ, ձեր լուս երես պազնելու, ասա՛ էդա խրկածս փարայով թող թափեն (ազատեն) իմ ջան ու արև Վրթէյին անհաւատ Օմար ազայի գերութիւնից: Աստուած էնոր տուն

ակողմ (քանդի), սրբը Վարապետ Էնոր զիւանն Էնէ, հարուր դուրուչ պարտքի տեղ քաշեց, տարաւ զիմ սուլթան Վրթէն:

— Եաման, քարամաթիղ (ողորմութիւնիղ) մեռնեմ, Աստուած, լսուում էր մի ուրիշ ալևորի սրտատոչոր մորմորը, 25 ջոջ ու պզտիկ քուլֆաթ (ընտանիք) թողեր եմ շիւար (անտէր), եկեր չեմ քանի դուրուչ դատեմ, յորթա (որ) տանիմ իմ յէսիր (գերի) թափեմ, սր զինայ (ով գիտէ), սաղ են, մեռած են...

Ես չեմ կամենում, յարգելիք, ցաւացնել ձեր սիրտը, դուք ինքեանքդ, կարծեմ, կը հասկանաք, թէ ինչ կը զգայի ես՝ յիշելով հայրենիքում թողած 25 «քուլֆաթը», ասաց Թորոսն ուսուցիչներին, լաւ էր, որ մեզ հիւրասիրող Ղազարը չուշացրեց իւր կարգադրութիւնը ե թոռանս գրկից ու շտապեցրեց իւր բնակարանը, ուր այժմ ես ձեզ առաջնորդում եմ:

Ղազարի ասութեամբ՝ իւր կացարանը մի աստուածասէր սայլապանի է, սր հիմա բացակայ է Թիֆլիսից:

Սայլապանն իւր միակ սենեակի մէջ մթերել է իւր ամբողջ շարժական կայքը ու վարձուել երկաթուղու գծի վրայ աշխատելու: Իբրև պահապան՝ նա թողել է Ղազարին, տալով նրան բնակութեան մի խրճիթ:

Ղազարը տարաւ մեզ իւր խրճիթը, ցոյց տրւեց անկիւնում դրուած, բերանը կոտրուած ջրի սա-

փորը, իւր ճանապարհորդական մաղախից երեք հաց հանեց, մեզ բաժին թողեց և վերջին հրաժարականի հետ այս խօսքերն ասաց:

— Ես հիմա գնում եմ մեր երկիրը, եթէ Աստուծով ընտանիքս կենդանի գտայ, այն է՝ կը մխիթարուիմ, իսկ եթէ անօրէնների ձեռքով երկինքը գնացած կը լինին, ես էլ գլուխս կը դնեմ նրանց գերեզմանի վրայ ու նրանց մօտ կը հանգստանամ, իսկ եթէ գերեզմանների տեղը չը գտայ, կը ստըռտեմ նրանց դահիճներին՝ կը գտնեմ, կամ իրանց կսպանեմ, վրէժս կառնեմ, կամ նրանց ձեռքով ես էլ երկինք կը թռչիմ, հոգևով իմ սիրելիների քովը կը դնամ:

Ութ ինն օր է, պարոնայք, շարունակեց Թաթոսեանը, սր մենք Ղազարի բնակարանումն ենք, առաջին երկու երեք օրը մենք կերանք մեզ բարերարող Ղազարի թողած պաշարը:

Այդ հացից պատը մի կտոր թաղցրեց ծոցումը թոռան համար, մանուկն երկու օր հացի վերջին մնացորդով էր ապրում:

— Երեք օր Թորոսը դուրս չեկաւ իւր բնակարանից, շարունակեց ծերը, չորրորդ օրը մեծ դժուարութեամբ և երկմիտ սրտով համոզեց թոռանը տանը մնալ ու ինքը բաժանուեց մանուկից՝ դուրս եկաւ փողոց: Նա մտադիր էր զիմել մի քանի հասկացողների և յայտնել իւր գրութիւնը: Ամէն տեղ նա սառն երես տեսաւ. կերևի, Թիֆլիսի ժողովուր-

դը շատ է ձանձրացել իրեն դիմող պանդուխտներին, ոչ ոք չուզեցաւ Թորոսին լսել: Մի երկուան այնքան բարի գտնուեցան, որ կոպէկներ առաջարկելով կամեցան ազատուել անկոչ այցելուից. բայց այցելուն անսովոր էր մուրալու, նա թողեց սև փոփոքը իւրեանց տէրերի ձեռքին ու շտապով հեռացաւ: Յը մմ... հեշտ է ասել շտապով հեռացաւ, թոռնիկն անխնամ ու քաղցած ընկած է, իսկ պապն ազբատ հպարտի մէկն է, նա գոռոզու թիւն է անուս: Ո՛չ, նա մտածեց ազնիւ գոռոզու թիւնով փրկել Թաթոսեան մեծ տան փոքրիկ և վերջին շառաւիղին: Թորոսը շրջեց Թիֆլիսի բոլոր փոռները, որոնք, ինչպէս երևեցաւ, ամենեքեան Տաճկաստանից եկած հայ-կաթորիկներ էին, հասկացրեց իւր դրու թիւնը, ապառիկ վճարքի պայմանա՛ հաց խնդրեց, թէկուզ այդ հացը լինէր փռան մէջ շաքաթներով թափուած, չոր ու անպէտք մկնկեր կտորները, խոստացաւ ստակ ձեռք բերելուն պէս՝ նախ հացի պարտքը վճարել, բայց փռնչիքն ամէնքը սառն յանդիմանական խօսքերով մերժեցին նրան:

Ահա հինգերորդ օրն է, որ Թորոսը Թիֆլիսի մայր եկեղեցու մօտ, այն տեղը, ուր նրան հանդիպեցաք, կանգնում է առաւօտեան ժամից՝ մինչև երեկոյեան ժամի վերջաւորութիւնը և առանց մի պատառ հացի վերադառնում է իւր սրջը և գրկում սիրելի թոռանը: Մանուկը «հաց, հաց» գոչելով նղզում, մրափում է պապի գրկում. ի՛նչ բարեբար

միջոց է բունը սոված մարդի համար. պապը չորս, իսկ թոռն երեք օրէ, որ ծոմ են, աւանդ, պապը չի կարողանում բերան բանալ և ողորմութիւն խնդրել, նա միայն աչքերով է խօսում անց ու դարձ անող ժամաւորների հետ, իսկ հազարաւորների միջից միայն երկուսը նրա սրտի խորքը թափանցեցին, նրա մունջ լեզուն հասկացան: Այդ երկու զգայուն անձինքը դուք էք, յարգելիք, նայեց Թորոսն ուսուցիչների երեսին, որ մի շաքաթուան պաշար առած՝ գնում էք մահուան ճանդից փրկելու անօթի, կիսամեռ թոռանս. խնդրում եմ, շտապեցէք, վախում եմ՝ արդէն ուշ լինի, ձեր աշխատութիւնն իզուր անցնի: Երեք օր է մանուկս հիւանդ է, այս առաւօտ նա բոլորովին ոյժ չունէր ոչ երեսիւ և ոչ խօսելու, ես նրան վերջին գրութեան մէջ թողի և ելայ:

Գ.

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս.

Օտարականի ցուցմունքով կառքը հաւարարի կամուրջն անցաւ և Մետեխի տակով վեր բարձրացաւ:

Հաւարարի բազմամարդ հրապարակը մեծահանդէս օրուան շնորհիւ՝ նմանում էր ամայի անապատի, կամ աւելի ճիշդը՝ ամարանոց քօշած գիւղի, մի քանի պառաւ շներ փակ խանութների առաջ հոտհոտալով կերակուրի թափուածներ էին պտըռ-

տում, իսկ հեռուում՝ մեծ ճանապարհի վրայ՝ թա-  
 ւալազորը ընկած էր Ադամայ որդուց միակ ներ-  
 կայացուցիչը՝ առանց գլխարկի, խճճուած, չէկ մա-  
 դերով, ոչխարենի մուշտակը հագին, մի ռամիկ ե-  
 րիտասարդ:

Նա փորձեր էր անում գետնից գլուխը վեր  
 բարձրացնելու, բայց հակառակ իւր ցանկութեան՝  
 գլուխը չէր խոնարհում տիրոջ հրամանին և թրխկա-  
 լով թաւալում էր ցեխի մէջ: Անկապ երգերն ու  
 շաղակրատ հայհոյաբանութիւնները յայտնի էին կա-  
 ցուցանում թաւալազոր եկողի անձնաւորութիւնն և  
 պաշտօնը. նա սիրոյ աստուածուհի Աստղկան խըն-  
 կարկունքերիցն էր, որ մոլի աստուածուհու անկեալ  
 դուստրներից մէկի հետ մտել էր Քարոսի տաճարը,  
 որը միակ բաց խանութն էր: Այդ երեւցաւ նրանից,  
 որ գինետան ծառաները քարշ տալով դուրս բերին  
 մի արբեցած կնոջ և ճանապարհի մէջ տեղը բաց  
 թողին: Կինն իւր ընկերից ոչ պակաս անխելի և  
 սեռին անպատշաճ հայհոյանքներով մօտեցաւ երի-  
 տասարդին, կամենում էր թխիցը բռնել, վեր քաշել,  
 բայց իւր ոտքերն էլ ամուր չէին, ինքը նոյնպէս  
 վայր ընկաւ տղայի գլխին:

Ուսուցիչների հրամանով կռքը շտապով թո-  
 դեց զգուելի տեսարանը և մտաւ արևելեան նեղփո-  
 դոցներից մինը:

Երկու երեք ցեխոտ խոտորափողոցներ մի-  
 մեանց հետեցին, կառապանն սկսեց տրտնջալ, մի

քանի տեղ կանգ առաւ, առաջարկում էր իջնել, թէ  
 կուզ առանց վճարքի, այսպիսի օրը, պնդում էր  
 կառապանը, կրկնակի վարձատրութեամբ հազիւ է  
 համաձայնում կարճ շրջաններ անել, իսկ հիմա իրան  
 գրկում են եկամտից:

Կառապանի փաստերն արգարացի էին, այդ  
 գիտէին ուսուցիչներն և յօժարութիւնով խոստա-  
 ցան անխնայ վճարել և սկսեցին յառաջ գնալ:

Արդէն մօտ էին քաղաքի արուարձանի դրանը:  
 Հիմա ուսուցիչներն սկսեցին կասկածել. արդեօք  
 չի՞ մոլորուել օտարականը, ճանապարհը չի՞ կորցրել:

— Ոչ, յարգելիք, ինն օր է, օրն երկու անգամ  
 ես այս փողոցներով երթեկութիւն եմ անում, կա-  
 ցարանս շատ հեռու չէ, հասածի պէս ենք, մտնենք  
 այս նեղ խուլ փողոցը և կը վերջանայ մեր ճանա-  
 պարհորդութիւնը:

Արդարև, փողոցի միւս ծայրումը կոտրատ-  
 ուած տախտակներով ցանկապատի առաջ կանգնաց-  
 րեց օտարականը կառքը:

Կառավարը լիուլի բաւականութիւն ստացաւ  
 Պետրոսից և հեռացաւ, ներողութիւն խնդրելով՝ որ  
 չի կարող սպասել նրանց յետ տանելու:

— Վնաս չունի, մենք երկար պիտի մնանք այս-  
 տեղ, ասացին ուսուցիչները կառապանին: Արդեօք  
 սնապարծութիւն էին անում, թէ իմ քսակիս վի-  
 ճակումն էր և իրանցը: — Վերջին պատճառն աւե-  
 լի հաւականութիւն է. շունչը փչող ծխական դպրո-

ցի ուսուցչի նիւթականն ում յայտնի չէ:

Ես բազմ չեմ ունեցել տեսնելու Թիֆլիսի չափ մեծամեծ քաղաքներ, բայց իմ կարճ խելքով դժուար թէ լուսաւորեալ երկրներում՝ Թիֆլիսի պէս որևէ հռչակաւոր քաղաքում այսպիսի հակասականութիւն լինի առ հասարակ, թէ շինութիւնների և թէ կենցաղավարութեան կողմից. չքեղն անշուքի հետ, գեղարուեստն անճաշակութեան հետ, քաղաքակրթութիւնը վայրենականութեան հետ այնպէս համերաշխօրէն մածոնի նման մէրուել, միացել են Թիֆլիսում, որ մի տեսակ խորթութիւն և ահաճութիւն կը պատճառէր բնիկներին, եթէ յանկարծ, մի օր՝ ասիականութիւնն արմատահան անուէր և եւրոպականութիւնն ընդհանրացնուէր:

Այս բազմազանութիւնն էր պատճառը, որ մեր ուսուցիչների զգուանքը չը բերեց այն տուն կոչուած բլրածքը, ուր առաջնորդեց նրանց Թաթոսեան պատուելին:

Երեսաթափ կամ *փուշտա* կոչուած տախտակի երեսի կտորներից միացրած մի դռնակ էր, որ արտաքին աշխարհը բաժանում էր աւերակի ներքին երեսից:

Բառի բուն նշանակութեամբ՝ դուռն իւր ցանկապատի հետ մի սահմանորոշ գիծ էր միայն և ոչ աւելի. ինչ թէ հաւ, կատու, շուն՝ անգամ խոզ ու հորթեր կարող էին անարգել ներս ու դուրս անել ժանգոտած մեխերով գամած կիսաւեր տախ-

տակակապի լայն անցքերով:

Խօսքիս իբրև ապացոյց՝ ուսուցիչների առաջից մթմթաթալով փախաւ մէրուն խոզն իւր խոճկորակներով:

Բաւական չէր հեղուկ ցեխը, որի մէջ թաղուեցին ուսուցիչների կրկնակօշիկները, խոզերի ոտքերից բարձրացած լուրու (ջրալի) տիղմն ապականեց եկտորների երեսներն ու մարուր վերարկուները:

Ներողութիւն խնդրելով՝ Թաթոսեանն առաջնորդեց իւր հիւրերին դէպի փոքրիկ բակի արևմտեան անկիւնում երևեցող տախտակեայ խրճիթանման ծածկը, որի մուտքին կախած էր մի պատառօտուն փսիաթ (ճիւղպ):

Պետրոսն ու Պօղոսը սարսափած՝ ուտերը վերքաշեցին, ներքին շրթուներն ուռցրին և միմեանց դարմացական ակնարկ անելով՝ կանգնեցին ու տարակուսանքի մէջ ընկան: Արդեօք չի ցնորուել Թորոսը, կամ թէ մի յետին մտադրութիւն հօ՛ չունի, ուր է տանում մեզ, այս բնակարան չէ:

— Եկէք, յարգելի հիւրերս, շնորհ արէք ինձ հետեւ, կարծես, ինքնաբերաբար պատասխանեց Թաթոսեանը չառաջարկած հարցին. այս փսիաթով պատրաստուած հիւզն է իմ կացարանս, ուր կը տնքայ, կը տառապի ազուորիկ գառնուկս: Օրհնուի՛ ձեր քաղաքը, ձմրան ամենախստմբեր ժամանակն է, մեր աշխարհը հիմա երեք գաղ բարձրութեամբ ձիւնով ծածկուած է, իսկ այս տեղ ծնկնահար ցեխ-

է, մեր աշխարհում այսօր հնոցի առաջ պահիլ կարելի է, իսկ այս տեղ կատարեալ գարնան եղանակ է, կը պակասի միայն կանաչն ու դաշտային ծաղիկը: Գլխած նախախնամութիւն, ինչ պիտի անէի, սը պիտի պատասպարէի տկար թոռնիկս, եթէ խիստ ձմեռ լինէր, բայց... ոչ... հեռի ինձանից գէշ գէշ մտմտութիւնքը, գաւակս ցրտից չէր գանգատում... ոչ, ոչ... մտնինք, ստուգենք...

Ուսուցիչները լուսթեամբ հետեցին իրանց առաջնորդողին, փսիաթը վեր բարձրացրին և ներս մտան:

Գծուարին է, մինչև անգամ անհնարին, գրչով, կամ լեզուով ներկայացնել նրանց աչքի տեսածը, կամ զգացածը: Հինգ բայրաչափ մի ծածկ էր այն՝ առանց լուսամտի, չորս պատերից միայն մինն էր անթրծիլ ազիւսից շարած: Այդ երկու փոքրիկ պատուհաններով կից սենեակի պատն էր. երեք մնացած պատերն անյղկել տախաակներից էին բարձրացած:

Անշուշտ գոմ է եղած առաջ այս խրճիթը, սուտ չէր հայրենիք գնացող Ղազարի պատմածը: Մայրապանն իւր ձիուն ցրտից պաշտպանելու զգուշութեամբ՝ տախտակները միմեանց մօտ է ամրացրել:

Գոմ լինելն անկասկած էր. ետևի պատի երկայնութեամբ ընկած մսուրքն անհերքելի ապացոյց էր: Միանգամայն կը ճշմարտուի մեր ասածը, եթէ նայենք յատակի վերայ ներքեւ շաղ անցած խոտի

կրճոնին (ձիու կերուածքից մնացած կոշտ խոտերի աւելորդը) և մսուրքի մէջ եղած հողախառն, հնացած դարմանին: Բնակարանիս կահկարասիքի մասին գաղափար կազմելու յարգելի պատճառով՝ թող գանցառութեան չը տանք հանդիպակաց պատին ամրացրած հաւերի թառը, որ ըստ երևութին՝ շինուած օրից ցայսօր մաքրելու մասին ոչ ոք գլուխ չի ցաւացրել մտածելու:

Առաջին տեղը, որ գրաւեց մեր այցելուների լուրջ ուշադրութիւնը, մսուրքն էր:

Մսրքի մէջ՝ փթած խոտի վրայ ձգուած էր մի գեղնած, դալկահար անշարժ էակ: Հինգ, կամ վեց ամեայ մի մանուկ էր նա, որի ոչ դէմքի գծագրութիւնից և ոչ կիսամերկ մարմինը ծածկող հնոտիներից հնար էր սեռը որոշել:

Մանուկի թանձր յօնքերից, փակ, փոս ընկած, բայց բոլորակ աչքերից, նիհար, բայց ձուածն դէմքից, փոքրիկ բերանից, քնքոյշ, բայց կապտացած շրթունքներից, կիսաբոլորակ և կանոնաւոր իզակից աւելի շուտ աղջկայ, քան տղայի էր յարմար նմանեցնելը, եթէ Թաթոսեանն իւր բացականչութիւնով սեռը չորոշէր:

Անգուգական մանչս, աղուորիկ Գասպարս, գոչեց Թաթոսեանը, ել, նստէ, քեզի համար հաց եմ բերած, նայէ, ինչ փափկիկ հացեր ու ուրբան շատ:

— Գասպար... Գասպար... չէս լտեր... իմ խորոտիկ թոռնիկս... կրկնում և երեքլինում էր պա-

պը, ո՛հ... Աստուած իմ... ցնցուեց Թորոսն և աչքերը լայնացան, յետ ճոթուեցին... աւանդ... միթէ... վայ ինձ... դժխեմ հարուած... դառն ճշմարտութիւն... անագորոյն ճակատագիր... քեր ինչ խօսքի հետ թշուառ ծերունին ձախ ձեռքը տարաւ բերեց ու իւր ճակատին մի խփստ հարուած տալով ընկաւ մահացած թոռան վրայ և անմխիթար հեծկտում էր:

Ուսուցիչներն արգելք չեղան, նրանք ներս մտնելու առաջին վայրկենից հասկացան բանի էութիւնը և տխուր ակնարկներով վճռեցին հեռու կանգնել և թոյլ տալ եղկելի և հէգ պապին վերջին պարտքը կատարելու, իւր փղձուկն ամոքելու:

Պետրոսն ու Պօղոսը լուսթեամբ արտասուքները կուլ էին տալիս:

Յանկարծ Թորոս կոշուած խորհրդաւոր անձը թողեց մեռած դիակը, մի քայլ յետ ընկրկեց, շըրջուեց, սուր հայեացք ձգեց ուսուցիչների երեսին, երեք անգամ ծափ գարկեց, թևերը վեր բարձրացրեց, մի ոտքի վրայ պտոյաներ գործելով՝ ոստիւններ արեց, ձեռքը ծոցը տարաւ, մի այցետոմս հանեց, երիտասարդներին շարտեց. նորից վրայ վազեց, գրկեց մեռելին և քսան ու հինգ անգամ արագ արագ միմեանց ետևից համբոյրներ տուեց:

— Այս առաջին համբոյրը քո հօրդ՝ Գրիգորի փոխարէն, այս երկրորդը՝ մօրդ՝ Եղսիկի անունով, երրորդը՝ բեզ իւր ծոցում քնեցնող տատիդ՝ Անթա-

ռամ պառուկիս կողմանէ, չորրորդը՝ Մարիամիկի, հինգերորդը՝ հօբեղբարցդ՝ Սահակիս, Անոնդիս, Վահանիս... Նարգիզի, Սուսամբարի, Տիրունիկի... քսան և հինգ արական և իգական անունների հետ մի մի համբոյր կնքելով անշնչացած մանկան ճակատին, աչքերին, այտերին, ձեռքերին՝ Թորոսը գոչեց.

— Այս վերջին համբոյրն ընդունիր, Գասպարիկս, քո տարաբաղդ պապից՝ Մար... անեան շիջուցեալ տան ապերջանիկ հօր կողմանէ:

— Մար... անեան... Մար... անեան... սա նա է, նա՛ Մար... անեանը, էրզրումի յայտնի տան գլուխը, յայտնի բարերանը, հանրահռչակ Մար... անեանը... — Այո, Մար... անեանը, այցետոմսին նայեցին և կարգացին ուսուցիչները, ափսոս երևելի գերդաստան, ափսոս Մար... անեան տուն, որ Կարինի հայկական պարծանքներից մինն էր:

Մար... անեանը կանգնեց, նա գոռոզաբար գլուխը վեր բռնեց, հպարտ հպարտ շուրջը նայեց, ձեռքերով գոմն ուսուցիչներին մատնացոյց արեց և հատ ընդ հատ քրքիջներ արձակելով գոչեց.

— Բարեաւ մ'նսս և դու՛ Մար... անեան վերջին հոյակապ ապարանք, էրզրումից Թիֆլիս փոխած շքեղագարդ պալատ:

Մի բարձրաձայն արհամարհական ծիծաղ՝ և Մար... անեանը կայծակի արագութեամբ դուրս թռաւ խրճիթից և հալաբարի փողոցներում աներկութացաւ:

Մի բարձրաձայն արհամարհական ծիծաղ՝ և Մար... անեանը կայծակի արագութեամբ դուրս թռաւ խրճիթից և հալաբարի փողոցներում աներկութացաւ:

ՆԱ ՅՆՈՐՈՒՄԵ ԷՐ:

10

Երեք օր ուսուցիչները Թիֆլիսի քունճ ու պու-  
ճախները տալին ու վրայ արին, ամէն անցուղար-  
ձողների հարցրին, հիւանդանոցները մտան, քաղա-  
քային կարգապահներին զիմեցին, բայց բոլորն ա-  
պարգիւն:

Մի շաբաթից լսուեց, որ մարդակուլ Կուր զե-  
տը մի գիակ է դուրս ձգել երկու ժամաշափ հեռու  
Սօդանլուխ կոչուած նախկին կայարանի մօտ:

Երիտասարդները կառք վարձեցին, փութացին,  
բայց մինչև նրանց հասնելը՝ գիակն արդէն հողին էր  
յանձնուած:



2013

1. ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ, Վէպ (երկրորդ տիպ)	
(սակաւաթիւ) . . . . .	1 50
2. ԱՂԱՍԻ, Թափերգութիւն (սպառուած).	— —
3. ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՄՔԱՐԻ ՄԱՍԻՆ, Թարգ-	
Ճանութիւն (սպառուած) . . . . .	— —
4. ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ,	
Թարգճանութիւն (սպառուած) . . . . .	— —
5. ՂԱՐԱՐԱՂԻ ՏԻՐԱՄԱՅՐ ՄԱՐԻԱՄԵԱՆ	
ԱՂԶԿԱՆՑ ԴԳՐՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ, (սպառ-	
ուած) . . . . .	— —
6. ԱԳՈՒԼԵԱՑ ԵՐԿՍԵՌ ԴԳՐՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ,	
(սպառուած) . . . . .	— —
7. ԿՈՌՈՒԱԾԱՂԻԿ, Վէպ (մամուլի տակ է)	— —
8. ՀԱՅԻ ԽՆԴԻՐ, Վէպ (սակաւաթիւ) . . . . .	1 —
9. ՇԱՀԷՆ, Վէպ (սակաւաթիւ) . . . . .	1 —
0. ՅՄՅԵՐ, Վէպ . . . . .	1 —
1. ԲՂԴԷ, Վէպ . . . . .	1 20
2. ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ, Վէպ . . . . .	1 20
3. ՅՈՒՇԻԿՆԵՐ, . . . . .	1 —

Բոլոր իմ աշխատութիւններս, բացի «ՆԱ» պատկերից, վաճառուում են կենդրոնական գրաւաճառանոցումը և ինձ մօտ:

Հասցէս՝ Տփլիսի, Ներսիսեան դպրանոց:  
Դումարով առնողին 20<sup>0</sup>/<sub>0</sub> զիջում կը վինի:  
Ճանապարհածախքն առնողի վրայ: